ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Փգիշտիի 1

№ 3730-Ա « 11 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԴԻՄԻՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ Հ.58 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԱՐԿ ՎԱՐԴԳԵՍ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԱԲՅԱՆԻ, ԳՈՀԱՐ ԳՐԻԳՈՐԻ ԱՐԱԲՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Մարկ Վարդգես Գրիգորի Արաբյանի (ծնված 25.08.1971թ.), Գոհար Գրիգորի Արաբյանի (ծնված 01.02.1970թ.) դիմումը: Երևան, Էրեբունի, Դիմիտրովի փողոց հ.58 հասցեում գտնվող ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 389.2քմ, որից 349.8քմ մակերեսով հողամասը Մարկ Վարդգես Գրիգորի Արաբյանին, Գոհար Գրիգորի Արաբյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23.12.2024թ. հ.23122024-01-0224 վկայական):

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 2001 թվականը, ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից տրված 15.05.2025թ. հ.ԱՏ-15052025-01-0683, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 05.08.2025թ. հ.Հ-6877 գրությունները, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 11.09.2025թ. հ.20-Էլ-21618 եզրակացությունը, համաձայն որի Երևան, Էրեբունի, Դիմիտրով փողոց հ.58 հասցեի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 1, 2, 3 կետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողամասերի ցանկում, ղեկավարվելով «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 2-րդ հոդվածով.

1. Վերականգնել Երևանի Էրեբունի, Դիմիտրով փողոց հ.58 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Մարկ Վարդգես Գրիգորի Արաբյանի, Գոհար Գրիգորի Արաբյանի սեփականության իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 349.8քմ մակերեսով հողամասին (որը ընդհանուր համատեղ սեփականություն է Երևան քաղաքի Դիմիտրով փողոց հ.55 հասցեի համասեփականատերեր Ենոք Սահակի Արաբյանի և Համլետ Սահակի Արաբյանի հետ) կից 39.4քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 39.4քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ:

2. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետի կողմից հաստատված հատակագծով:

3.Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի սեպտեմբերի 10-ի հ.204-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծով Երևան քաղաքի Էրեբունի, Դիմիտրով փողոց հ.58 հասցեում գտնվող 389.2քմ մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը սահմանել բնակելի կառուցապատման:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

6. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ